

Ինչպիսի իրավունքներ ու պարտականություններ ունեն ՀՀ քաղաքացիները հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում

- «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք իրավունք ունեն՝

ա) պաշտպանել իրենց կյանքը, առողջությունը և գույքը հրդեհներից.
բ) օրենքով սահմանված կարգով ստանալ հրդեհի հետևանքով առողջությանը և գույքին պատճառված վնասի հատուցում կամ ապահովագրական հատուցում.
գ) պետական հրդեհային հսկողության մարմիններից ստանալ անհրաժեշտ բացատրություններ և խորհրդատվություն՝ հրդեհային անվտանգության վերաբերյալ.
դ) իրենց մասնակցությունը ցուցաբերել հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում, այդ թվում՝ հրդեհային պահպանության հասարակական միավորումների միջոցով.

ե) աջակցել հրդեհի առաջացման պատճառների բացահայտմանը:

Հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում քաղաքացիները պարտավոր են՝
ա) կատարել հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջները.
բ) հրդեհը հայտնաբերելու դեպքում հայտնել այդ մասին հրդեհային պահպանության մարմիններին և, առանց իրենց համար զգալի վտանգի ու առանց այլ կարևոր պարտականությունների խանգարման, հնարավոր միջոցներ ձեռնարկել մարդկանց, գույքը փրկելու և հրդեհը մարելու համար.
գ) հնարավորություն տալ պետական հրդեհային հսկողության մարմինների պաշտոնատար անձանց, օրենքով սահմանված կարգով, հետազոտելու բնակելի և օժանդակ շինությունները:

Ինչ պատասխանատվություն է սահմանված հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու համար

-Հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 187-րդ հոդվածով սահմանված է պատասխանատվություն, այն է՝

Հիմնարկներում, կազմակերպություններում, կոլտնտեսություններում, հասարակական վայրերում, պահեստային շենքերում, հանրակացարաններում և բնակելի տներում, ինչպես նաև համապատասխան օբյեկտներ նախագծելիս և կառուցելիս հրդեհային անվտանգության կանոնները խախտելը կամ չկատարելը, կամ հակահրդեհային գույքի, սարքավորումների, հրդեհները հայտնաբերելու և հանգցնելու ավտոմատ միջոցների օգտագործման ու պահպանության կանոնները խախտելը՝

-առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկից հիսնապատիկի չափով:

Սույն հոդվածի առաջին մասի դիսպոզիցիայում նշված խախտումները վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին անգամ կատարելը՝

-առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով:

Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության պաշտոնատար անձանց կողմից տրված կարգադրագրերում նշված ժամկետում թույլ տրված հրդեհային անվտանգության կանոնների խախտումները չվերացնելը՝

-առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրիսնապատիկի չափով:

Ինչպիսի տուգանքներ են նախատեսված արտադրական վտանգավոր օբյեկտը ռեեստրում գրանցման չներկայացնելու և տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցկացնելու համար

-«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն արտադրական վտանգավոր օբյեկտը ռեեստրում գրանցման չներկայացնելն ու տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցկացնելն առաջացնում են տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով (այսինքն՝ մեկ միլիոն դրամ):

Պարտադիր են արդյոք հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջները շինարարություն իրականացնելիս

-«Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերը (տեխնիկական կանոնակարգերը), ինչպես նաև հրդեհային անվտանգության պահանջները սահմանող ստանդարտները պարտադիր են բնակավայրերի, շենքերի և շինությունների նախագծման, կառուցման և շահագործման, հիմնանորոգման և վերակառուցման, ինչպես նաև սարքավորումների արտադրության և շահագործման ժամանակ: Հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերը նախապես համաձայնեցվում են պետական հրդեհային հսկողության մարմինների հետ: Հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերով չսահմանված՝ հրդեհային անվտանգության ապահովման առանձին լուծումներ պահանջող հարցերի վերաբերյալ եզրակացություններ է տալիս պետական հրդեհային հսկողություն իրականացնող մարմինը (այն է՝ ՀՀ ԱԻՆ պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունը):